ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ներդրումային ծրագրերի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում:

2. Վարչությունը իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, այլ իրավական ակտերով, Նախարարության կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում Նախարարը՝ Նախարարության գլխավոր քարտուղարի ներկայացմամբ:

4. Վարչության կառուցվածքում ընդգրկվում են վարչության պետը և վարչության բաժինները:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

5. Վարչության հիմնական խնդիրներն են՝

1) ներդրումային բարենպաստ միջավայրի ապահովումը,

2) ներդրումների ներգրավման խթանումը,

3) ներդրումների արդյունավետության բարձրացումը,

4) ներդրումային ծրագրերի իրագործման աջակցության ապահովումը:

6. Վարչության հիմնական նպատակներն են՝

1) ներդրումների ներգրավման և ներդրումների պաշտպանության քաղաքականության մշակումը,

2) ներդրումային ծրագրերի համակարգումը և արդյունքների գնահատումը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Վարչության գործառույթներն են՝

1) ներդրումների ներգրավման և ներդրումների պաշտպանության քաղաքականության մշակման աշխատանքների ապահովումը,

2) ներդրումների ոլորտում իրավահարաբերությունները կարգավորող իրավական ակտերի մշակման աշխատանքների ապահովումը,

3) ներդրումային ծրագրերի էլեկտրոնային հարթակի ստեղծման, կատարելագործման աշխատանքներին մասնակցության և վարման ապահովումը,

4) իր իրավասության սահմաններում խոշոր ներդրումային ծրարգրերի իրականացման մասնակցության ապահովումը,

5) տնտեսության զարգացման պետական և մասնավոր երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ընթացքի դիտանցման և արդյունքների գնահատման մասնակցության ապահովումը,

6) ներդրումային միջավայրի զարգացման խոչընդոտների բացահայտման աշխատանքներ իրականացումը և դրանց վերացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացման ապահովումը,

7) մասնավոր ներդրումների ոլորտների որոշման մեթոդաբանության մշակման աշխատանքների ապահովումը,

8) մասնավոր ներդրումային ծրագրերի մշակմանն ու իրագործմանը ներկայացվող նվազագույն պահանջների մշակման աշխատանքների ապահովումը,

9) մասնավոր ներդրումների կառավարման վերաբերյալ մեթոդաբանական ձեռնարկների և ուղեցույցների մշակման աշխատանքների ապահովումը, ըստ անհրաժեշտության դրանց վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումների տրամադրումը,

10) մասնավոր ներդրումային ծրագրերի իրագործման աջակցության ապահովումը,

11) մասնավոր ներդրողների ներդրումային ֆոնդերի և հիմնադրամների, միջազգային ֆինանսական հաստատությունների և օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների հետ աշխատանքների ապահովումը,

12) մասնավոր ներդրումային ծրագրերի առաջնահերթությունների որոշման գործընթացի մասնակցությունը և դրանց ընթացքի դիտանցման և արդյունքների գնահատման աշխատանքների ապահովումը,

13) մասնավոր ներդրումային ծրագրերի գնահատման ապահովումը,

14) ներդրումային համաձայնագրերի մշակման աշխատանքների ապահովումը,

15) նախարարության ենթակա ընկերությունների գործունեության մոնիթորինգի իրականացումը, ստրատեգիայի մշակման և բարելավման աշխատանքների ապահովումը,

16) ենթակա ընկերությունների նպատակների արդյունավետության գնահատման աշխատանքների ապահովումը,

17) զբոսաշրջության քաղաքականության մշակման աշխատանքների ապահովումը,

18) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված՝ նախարարության կանոնադրական խնդիրներից բխող այլ գործառույթներ,

19) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված՝ նախարարության կանոնադրական խնդիրներից բխող այլ գործառույթներ:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

8. Վարչությունը կազմված է հետևյալ բաժիններից.

1) Ներդրումային ծրագրերի համակարգման և աջակցման բաժին,

2) Ենթակա ընկերությունների բաժին:

9. Վարչության բաժիններն իրենց գործառույթներն իրականացնում են միմյանց հետ համագործակցելով:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

10. Ներդրումային ծրագրերի համակարգման և աջակցման բաժնի հիմնական գործառույթներն են.

1) ներդրումների ներգրավման և ներդրումների պաշտպանության քաղաքականության մշակումը,

2) ներդրումների ոլորտում իրավահարաբերությունները կարգավորող իրավական ակտերի մշակումը,

3) ներդրումային ծրագրերի էլեկտրոնային հարթակի ստեղծման, կատարելագործման աշխատանքներին մասնակցությունը և վարումը,

4) իր իրավասության սահմաններում խոշոր ներդրումային ծրարգրերի իրականացման մասնակցությունը,

5) տնտեսության զարգացման պետական և մասնավոր երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ընթացքի դիտանցման և արդյունքների գնահատման մասնակցությունը,

6) ներդրումային միջավայրի զարգացման խոչընդոտների բացահայտման աշխատանքներ իրականացումը և դրանց վերացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացնումը,

7) մասնավոր ներդրումների ոլորտների որոշման մեթոդաբանության մշակումը,

8) մասնավոր ներդրումային ծրագրերի մշակմանն ու իրագործմանը ներկայացվող նվազագույն պահանջների մշակումը,

9) մասնավոր ներդրումների կառավարման վերաբերյալ մեթոդաբանական ձեռնարկների և ուղեցույցների մշակումը, ըստ անհրաժեշտության դրանց վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումների տրամադրումը,

10) մասնավոր ներդրումային ծրագրերի իրագործման աջակցությունը,

11) մասնավոր ներդրողների ներդրումային ֆոնդերի և հիմնադրամների, միջազգային ֆինանսական հաստատությունների և օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների հետ աշխատանքների իրականացումը,

12) մասնավոր ներդրումային ծրագրերի առաջնահերթությունների որոշման գործընթացի մասնակցությունը և դրանց ընթացքի դիտանցման և արդյունքների գնահատման իրականացումը,

13) մասնավոր ներդրումային ծրագրերի գնահատման իրականացումը,

14) ներդրումային համաձայնագրերի մշակումը,

15) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված այլ գործառույթների իրականացման ապահովումը,

16) իր իրավասությունների շրջանակներում մասնակցություն «պետություն–մասնավոր գործընկերության» ծրագրերի նախագծերի պատրաստմանը՝ «պետություն–

մասնավոր գործընկերության» ընթացակարգում նախատեսված չափանիշներին և սկզբունքներին համապատասխան,

17) իր իրավասությունների շրջանակներում իրականացնում է «Պետություն-մասնավոր գործընկերության» ծրագրերի ընթացիկ մշտադիտարկումների պայմանական և ուղղակի պարտավորությունների կատարման տեսանկյունից,

18) այլ գործառույթներ՝ Բաժնի պետին վերապահված լիազորությունների շրջանակներում:

11. Ենթակա ընկերությունների բաժնի հիմնական գործառույթներն են.

1) նախարարության ենթակա ընկերությունների գործունեության մոնիթորինգի իրականացումը, ստրատեգիայի մշակումը և բարելավման աշխատանքների իրականացումը,

2) ենթակա ընկերությունների նպատակների արդյունավետության գնահատման աշխատանքների իրականացումը,

3) ձեռնարկությունների ֆինանսական արդյունքների բարելավմանն ուղղված աջակցության մեխանիզմների ու գործողությունների մշակումը,

4) Զբոսաշրջության քաղաքականության մշակման աշխատանքների ապահովումը,

5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված այլ գործառույթների իրականացման ապահովումը,

6) այլ գործառույթներ՝ Բաժնի պետին վերապահված լիազորությունների շրջանակներում:

VI. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

12. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է վարչության պետը:

13. Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է նախարարին:

14. Վարչության բաժինները ղեկավարում են բաժինների պետերը:

15. Բաժինների պետերն անմիջական ենթակա և հաշվետու են վարչության պետին:

16. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է վարչության բաժինների պետերից մեկը՝ վարչության պետի ներկայացմամբ:

17. Վարչության կողմից պատրաստված ներքին գրությունները ստորագրվում են Վարչության պետի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ նրան փոխարինողի կողմից:

18. Վարչության աշխատողները կարող են ընդգրկվել Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով ստեղծվող միջգերատեսչական հանձնաժողովներում և այլ աշխատանքային խմբերում:

19. Վարչության պետի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների հետ կապված դրույթները սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով:»